ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 77 - 78 (16472) ՇԱԲԱԹ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ

ԿՐՈՆԱԿԱՆ

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈ՛ՒՆ ՁԵԶ». ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 30-ին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդի հրավերով, պաշտոնական եռօրյա այցով, Վրաստան ժամանեց Կաթոլիկ եկեղեցու ղեկավար, Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինը:

Թբիլիսիի միջազգային օդանավակայանում Հռոմի Պապին դիմավորեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ տիկնոջ հետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, պաշտոնական այլ անձինք:

Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, Հռոմի Պապը մեկնեց Վրաստանի նախագահի նստավայր, որտեղ հանդիպում ունեցավ Գիորգի Մարգվելաշվիլու հետ:

Հանդիպման ավարտից հետո, Հռոմի Պապը եւ Վրաստանի նախագահը ողջույնի խոսքով դիմեցին երկրի գործադիր եւ օրենս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց Եվրամիության հետ ազատ առեւտրի համընդգրկուն գոտու համաձայնագրի քննարկմանը նվիրված կլոր սեղանի ձեւաչափով անցկացված հանդիպմանը:

Իր խոսքում, վարչապետը նշեց, որ կարեւոր նշանակություն ունի այն, որ վրաց ներդրողները ծանոթանան եվրոպական չափորոշիչներին, ձեւավորեն վրացական արտադրանքի եվրոպական շուկա արտահանելու նոր ուղիները, ներգրավվեն միջազգային գործարարության մեջ: Վարչապետի համոզմամբ, գործարարության զարգացման ամենաիրատեսական ուղին տեղի օրենսդրության համապատասխանությունն է եվրոպական չափորոշիչներին ու նոր կարգավորումների եւ օրենքների ընդունումը: Գիորգի Կվիրիկաշվիլու հավաստմամբ, նման հանդիպումներն առավել նպաստում են մասնավոր հատվածի ներգրավմանը կարգավորման գործընթացում, ինչը թույլ կտա առավելագույնս հաշվի առնել վերջիններիս պահանջները:

Վարչապետի խոսքով, ստեղծվել է ներդրողների խորհուրդ, որի շրջանակներում քննարկվում են օրենսդրությունում եւ կարգավորման ոլորտում ծրագրված բոլոր փոփոխությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. ԲԱՐԱԼԵԹՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

საქართველოს იუსტიციის სამინისტრო

Սեպտեմբերի 27-ին, Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին այցելեց Ախալքալաքի մունիցիպալիտետի Բարալեթի գյուղ եւ ծանոթացավ այնտեղ կառուցվող Հասարակական կենտրոնի շինարարության ընթացքին:

Հասարակական կենտրոնի նպատակն է՝ գյուղերում, որոնք գտնվում են շրջկենտրոններից բավական հեռավորության վրա, ապահովել պետական եւ մասնավոր սպասարկումների մատուցումը: Հասարակական տների նախագծի գլխավոր իմաստը՝ պետական սպասարկումները քաղաքացիներին հասցնելն է եւ գյուղերի հզորացումը:

Բարալեթիի Հասարակական կենտրոնի շինարարությունն իրականացնում է մրցույթում հաղթանակած ընկերությունը: Կենտրոնը կսպասարկի Բարալեթիի եւ հարակից գյուղերի բնակիչներին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԱՀԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ცესკო ცენტრალური საარჩევნო კომისია

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան հանդիպում ունեցավ ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի դիտորդական առաքելության հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման ընթացքը: Ինչպես նշեց Թամար Ժվանիան, ընտրական վարչակազմը պատրաստ է անցկացնել միջազգային չափորոշիչներին համապատասխան թափանցիկ, ազատ ընտրություններ: Նա խոսեց նաեւ ընտրացուցակի նորացման, գրանցված ընտրական սուբյեկտների եւ դիտորդական կազմա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՍՈՒԽՈՒՄԻ ԱՆԿՄԱՆ ՕՐՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սեպտեմբերի 27-ին լրացավ Սուխումիի անկման 23-րդ տարելիցը: Այդ կապակցությամբ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչները այցելեցին մայրաքաղաքի Հերոսների հրապարակ եւ հարգանքի տուրք մատուցեցին Աբխազիայում զոհվածների հիշատակին:

«Ամեն տարի մենք նշում ենք այս ողբերգական օրը եւ հիշում ընկած հերոսներին, որոնք դարձան այդ պատերազմի զոհը: Մեր նպատակը միասնական եւ ուժեղ Վրաստան ստեղծելն է եւ մեր երկիրը միավորելը»,- հայտարարեց նախագահը եւ հավելեց, որ իր որոշմամբ Աբխազիայում զոհված 28 հերոսներ պարգեւատրվել են Վախտանգ Գորգասալու երկրորդ եւ երրորդ աստիճանի շքանշաններով:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ նախարարների կաբինետի անդամներն աբխազական զորքերի կողմից Սուխումը գրավելու տարելիցին հարգեցին զոհվածների հիշատակը: Վարչապետի խոսքով, այսօր հարկ է մտածել այն մասին, թե ինչպես բուժել վերքերը եւ վերականգնել վրացիների ու աբխազների, օսերի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑԵՐԻ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿՈՎ

Սեպտեմբերի 28-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարությունում Վրաստանի եւ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ անցկացվեցին երկկողմ քաղաքական խորհրդակցություններ: Վրացական կողմի պատվիրակությունը գլխավորում էր Վրաստանի ԱԳ փոխնախարար Գիգի Գիգիաձեն, իսկ հայկական կողմինը՝ Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը: Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Յուրի Պետրոսյանը, առաջին քարտուղար Իռեն Տեր-Հովհաննիսյանը եւ երկրորդ քարտուղար Էլինա Մկրտչյանը:

Քաղաքական խորհրդակցությունների ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ քաղաքական հարաբերությունների եւ երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի ներկա վիճակին եւ հետագա զարգացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Խորհրդակցությունների օրակարգում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվել տրանսպորտի, էներգետիկայի, մշակույթի եւ կրթության ոլորտներում համագործակցության խորացմանը: Կողմերն ընդգծեցին առկա իրավական դաշտի ցուցակագրման անհրաժեշտությունը:

Զրուցակիցներն անդրադարձան նաեւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցության ակտիվացմանն առնչվող հարցերին, մտքեր փոխանակեցին միջազգային եւ տարածաշրջանային բազմաթիվ խնդիրների շուրջ:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը ՍՈՒԽՈՒՄԻԻ ԱՆԿՄԱՆ ՕՐՆ Է

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁՈՒՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ վրացիների միջեւ քանդած կամուրջները, ինչպես միավորել երկիրը:

«Այս օրը՝ Սուխումիի անկման օրը, Վրաստանի պատմության ողբերգական օրերից մեկն է: Պատերազմի զոհ դարձան տասնյակ հազարավոր մարդիկ, հարյուր հազարավորներն էլ դարձան փախստական իրենց երկրում, եւ մենք ունեցանք բռնազավթված տարածքներ: Կարեւոր է, որ մեզանից յուրաքանչյուրը գիտակցի, որ դա պատերազմ էր վրացիների ու աբխազների դեմ եւ այդ պատերազմում հաղթող չէր կարող լինել: Մենք պետք է մտածենք այն մասին, թե ինչպես վերականգնենք ավերված կամուրջներն աբխազների ու վրացիների, օսերի ու վրացիների միջեւ, եւ բացառապես խաղաղ ճանապարհով, քայլ առ քայլ շարժվենք դեպի այդ նպատակը, որպեսզի վերամիավորենք երկիրը եւ վերադարձնենք միասնությունը երկրի զարգացման համար եւ այն բանի համար, որ մենք բոլորս ապրենք որպես եղբայրներ»,- հայտարարեց վարչապետը՝ ելույթ ունենալով հակամարտության զոհերի հուշահամալիրին ծաղկեպսակ դնելու ժամանակ:

ԿՐՈՆԱԿԱՆ

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈ'ՒՆ ՁԵԶ». ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիր մարմինների, քաղաքացիական հասարակայնության ու դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին:

Նույն օրը երեկոյան, Վրաստանի Պատրիարքարանում տեղի ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հանդիպումը Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինի հետ:

Հանդիպումներին ներկա էր Վիրահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Ուշ երեկոյան, Ֆրանցիսկոս Առաջինը հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանի ասորա-խալդեական կաթոլիկ համայնքի հետ:

Այսօր՝ հոկտեմբերի 1-ին, Հռոմի Պապը Թբիլիսիի Միխեիլ Մեսխու անվան մարզադաշտում կմատուցի Սուրբ պատարագ, որից հետո հանդիպում կունենա վրաց կաթոլիկ հոգեւորականների, կամելեցիների օրդենի ծառայողների եւ օգնության կենտրոնի բենիֆիցարների հետ: Հանդիպումը կանցկացվի Սուրբ Աստվածամոր հարության տաճարում:

Հանդիպման ավարտին Հռոմի Պապը Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի հետ միասին կուղեւորվի Մցխեթա՝ Սվետիցխովելի Մայր տաճար:

Հոկտեմբերի 2-ին Հռոմի Պապը Թբիլիսիից կմեկնի Բաքու:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԹԵՎ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. ԲԱՐԱԼԵԹԻՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչպես նշվեց, հասարակական կենտրոնները հիմնվում են շրջկենտրոնից հեռու գտնվող թվով մեծ բնակչություն ունեցող գյուղերում, բռնազավթված գոտու երկայնքով գտնվող գյուղերում եւ սահմանամերձ գյուղերում: Կենտրոնները ներկայացնում են շուրջ 200 սպասարկում: Ներկա դրությամբ, Վրաստանի տարբեր տարածաշրջանների 37 գյուղերի բնակիչներ արդեն կարող են օգտվել կետրոնների սպասարկումներից: Միայն 2016 թվականին բացվել է 10 հազար հասարակական կենտրոն, շինարարական աշխատանքներ են տարվում եւս տասը գյուղերում:

Հասարակական կենտրոնների ենթակառույցների հիմնումն ու ծրագրային ապահովումը իրականացնում է Արդարադատության նախարարության ենթակայության ներքո գտնվող «Պետական սպասարկումների զարգացման գործակալություն» ՀԻԻԱ-ն: Հասարակական կենտրոնների շինարարության նախագծում ներգրավված են Եվրամիությունը եւ տեղական ինքնակառավարումները:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻԿՐՈԲԻԶՆԵՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ

Քրեա-կատարողական յոթ տարբեր հաստատություններում գտնվող շուրջ 40 բանտարկյալի շնորհվեց միկրոբիզնեսի կարգավիճակ: Այդ կապակցությամբ, եկամուտների ծառայության աշխատակիցները, սեպտեմբերի 20-23-ին, պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարարության միջոցառումների շրջանակներում, բանտարկյալներին խորհրդատվություն մատուցեցին հարկադրման արտոնյալ կարգի վերաբերյալ: Բանտարկյալներին պարզաբանվեց, որ շնորհված կարգավիճակից իրենք կարող են օգտվել նաեւ ազատ արձակվելուց հետո:

Որպես հարկատու ֆիզիկական անձ եւ նաեւ որպես եկամուտների ծառայության www.rs.ge կայքէջից օգտվողի՝ բանտարկյալների գրանցումը իրականացվեց մինչեւ միկրոբիզնես կարգավիճակի շնորհում:

Միկրոբիզնեսի կարգավիճակի շնորհմամբ, բանտարկյալներին պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարարության կողմից հիմնած օնլայն խանութում՝ պատիժների կատարման հաստատությունում պատրաստված իրերի իրացման իրավունք է վերապահվում: Դրանց իրացումից ստացված եկամուտը եկամտահարկի ենթակա չէ:

Եկամուտների ծառայության պետի որոշմամբ, Վրաստանի կառավարության 2010 թվականի մարտի 30-ի թիվ 96 որոշման 13-րդ հոդվածի հիման վրա մեղադրյալ-բանտարկյալները ազատվում են հարկային մարմնի կողմից միկրոբիզնեսի կարգավիճակի շնորհման համար հաստատված սպասարկման սակագնի վճարից:

ՀԻԻԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ԱԴՐԲԵՋԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

Սեպտեմբերի 26-ին Ադրբեջանում սահմանադրական փոփոխությունների հարցով անցկացվեց հանրաքվե:

Ադրբեջանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, հանրաքվեին մասնակցել է ընտրողների 69,7 տոկոսը:

Համաձայն ներկայացված տվյալների՝ Ադրբեջանի նախագահի պաշտոնավարման ժամկետը 5-7 տարվա երկարաձգելու կողմ է արտահայտվել քվեարկողների 91,2 տոկոսը, փոխնախագահների ինստիտուտի ներդրմանը կողմ է 89 տոկոսը, պատգամավորների ընտրության ժամանակ տարիքային սահմանափակումը վերացնելուն կողմ է 88,3 տոկոսը, նախագահի ընտրության ժամանակ տարիքային սահմանափակմանը՝ 91 տոկոսը:

Ադրբեջանի քաղաքացիները երկրի նախագահին տվել են նաեւ խորհրդարանը ցրելու իրավունք. այդ փոփոխության օգտին է քվեարկել 87,4 տոկոսը:

ԹՈՒՐՔԻԱ

ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԳՈՐԾՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 32 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղը հայտարարել է երկրում հուլիսի 15-ի ձախողված ռազմական հեղաշրջման փորձից հետո ձերբակալված անձանց թիվը:

Բոզդաղի տվյալներով՝ երկրում ձերբակալվել է 32 հազար մարդ, 70 հազար մարդու նկատմամբ դեռեւս քննություն է ընթանում: Արդարադատության նախարարը տեղեկացրել է, որ հնարավոր են նոր ձերբակալություններ:

Պաշտոնական Անկարան Ֆեթուլլահ Գյուլենին մեղադրում է հուլիսի 15-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձը կազմակերպելու մեջ: Չափավոր իսլամի քարոզիչ Գյուլենը, սակայն, հրաժարվել է մեղադրանքներից՝ հայտնելով, որ որեւէ առնչություն չունի կատարվածի հետ:

ԻՍՐԱՅԵԼ

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՇԻՄՈՆ ՊԵՐԵՍԸ

Սեպտեմբերի 28-ին կյանքի 94-րդ տարում վախճանվեց Իսրայելի նախկին նախագահ Շիմոն Պերեսը:

Իսրայելի Հանրապետության ինն երորդ նախագահ Շիմոն Պերեսը սեպտեմբերի 13-ին տեղափոխվել էր հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի պալատ: Համակարգչային տոմոգրաֆիան նրա մոտ գլխուղեղի արյունազեղում էր ցույց տվել: Որոշվել էր հիվանդին արհեստական կոմայի մեջ մտցնել: Սեպտեմբերի 27-ին բժիշկները հայտնել են Պերեսի վիճակի կտրուկ վատթարացման մասին:

ՄԻՋԱԴԵՊ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ՅՈՒՐՈՎԻ «ՆՇԵՑԻՆ» ՍՈՒԽՈՒՄԻԻ ԱՆԿՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ

Սեպտեմբերի 27-ին, Սուխումիի անկման 23-րդ տարելիցի կապակցությամբ վրաց ազգայնականների մի քանի խմբավորումներ Թբիլիսիում, մետրոյի «Ռուսթավելի» կայարանից կազմակերպեցին երթ դեպի Հերոսների հրապարակ, ապա՝ ուղղվեցին մետրոյի «Մարջանիշվիլի» կայարանի կողմը:

Ականատեսների վկայությամբ, երթի մասնակիցները բավական ագրեսիվորեն էին տրամադրված: Նրանք Աղմաշենեբելու պողոտայում վիրավորել են անցորդներին, ջահեր են նետել թուրքական սրճարանների ուղղությամբ, փչացրել են խանութների ցուցանակները, վիրավորանք հասցրել մահմեդական զբաստաշրջիկներին:

150 հոգանոց երթին միավորվել էին ազգայնական մի շարք խմբավորումներ, այդ թվում՝ «Վրացական ուժ», «Ուլտրասներ» (Թբիլիսիի «Դինամոյի» երկրպագուների արմատական խմբավորումը), «Էդելվեյսը», «Բերգմանը»:

Նշենք, որ վերոնշյալ կազմակերպությունները ասպարեզում հայտնվեցին մոտ երկու տարի առաջ եւ իրենց համարում են ազգայնական, ծայրահեղ արմատական, աջ գաղափարախոսության կողմնակիցներ: Ինչպես հայտարարեցին ազգայնականների ներկայացուցիչները, իրենց համար ռուսամետ եւ լիբերալ գաղափարախոսությունը անընդունելի է. Մենք ունենք ազգային-ազգայնական գաղափարախոսություն»,- հայտարարեցին նրանք:

Քաղաքի կենտրոնում իրարանցումը կանխվել է ոստիկանության միջամտությամբ: Ոստիկանները ցրեցին «Վրացական ուժ» ազգայնական շարժման երթի մասնակիցներին եւ խուլիգանության մեղադրանքով ձերբակալեցին 11 մարդու:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈԼՈՐՏ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՈՂՆՈՒՂԵՂԻ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 28-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն բացեցին բժշկական բարձր տեխնոլոգիաների բազայի վրա հիմնված ամբուլատորական կլինիկան ու ողնուղեղի պատվաստման կենտրոնը:

Նոր կլինիկան միավորում է օնկոգեմատոլոգիայի եւ ողնուղեղի պատվաստման կենտրոնները, արյան բանկը, ճառագայթային թերապիայի եւ բարձր տեխնոլոգիական ախտորոշման դեպարտամենտները: Կլինիկայի բազայի վրա գործում է նաեւ մանկաբուժական բաժանմունքը՝ երեխաների վերականգնողական եւ օնկոգեմատոլոգիական ծառայություններով:

Նոր կլինիկայի աշխատակիցների հետ հանդիպման,՝ Գիորգի Կվիրիկաշվիլին անդրադառնալով առողջապահության համընդհանուր ծրագրին, նշեց, որ այն հիանալի արդյունքների է հասել, թեեւ, ինչպես նշեց վարչապետը, այն դեռեւս կատարելագործման եւ կարգավորման կարիք ունի:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ բռնագաղթված անձանց հարցերով ՄԱԿ-ի զեկուցող Չալոք Բեյանի հետ:

Հանդիպմանը մասնակցեց նաեւ փախստականների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն կոմիսարիատի պատվիրակությունը:

Քեթեւան Ցիխելաշվիլին հյուրերին ներկայացրեց իրավիճակը Վրաստանի բռնազավթված տարածքներում: Անդրադառնալով ժնեւի բանակցություններին, նա նշեց, որ փախստականների նորմալ վերադարձման թեման մնում է օրակարգում, եւ Վրաստանի իշխանությունները կրկին ակտիվորեն այն կբարձրացնեն: Ինչպես հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին, տվյալ պարագայում միջազգային հանրության, առանձնապես ՄԱԿ-ի աջակցությունն արտակարգ նշանակություն ունի:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԱՀԿ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կերպությունների մասին:

ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի դիտորդական առաքելությունը հատուկ հայտարարություն հրապարակեց Վրաստանում նախընտրական միջավայրի ուսումնասիրության եռօրյա արդյունքների վերաբերյալ: Հրապարակված հայտարարության համաձայն, առաքելության դիտորդները վավերացրել են նախընտրական միջավայրի բարելավում եւ կողմերին կոչ են արել խուսափել սադրիչ գործողություններից: Հայտարարությունում նշված է, որ նախընտրական փուլում ակտիվ մրցակցություն է վավերացվել կուսակցությունների միջեւ: Առաքելությունը մտահոգություն է հայտնել նաեւ այն կապակցությամբ, որ մրցակցող կողմերի կտրուկ հայտարարությունները հնարավոր է, որ վնասեն համակարգի նկատմամբ հասարակական վստահությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԲԱՑՎԵՆ 3703 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Հոկտեմբերի 8-ին, խորհրդարանական ընտրությունների օրը, երկրի 73 ընտրամարզերում կբացվեն 3703 ընտրատարածքներ:

Ինչպես տեղեկացրել է ԿԸՀ-ը, վերոնշյալ ընտրատարածքներից 526-ը հարմարեցված են սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար, իսկ 528-ում տեղադրվել են պանդուսներ:

Առաջիկա ընտրություններին առաջին անգամ չեն բացվի հատուկ տեղամասեր՝ ոստիկաններն ու զինծառայողները կկարողանան քվեարկել ըստ ծառայության կամ բնակության վայրի: Ինչ վերաբերում է բանտին եւ հիվանդանոցին, ապա այդտեղ, բացառության կարգով, կբացվեն 11 տեղամասեր: Տասը տեղամասերը կբացվեն երկրի մասշտաբով, բանտերում եւս մեկը՝ Իմերեթիի տարածաշրջանի Քութիրի գյուղում գործող ֆիզիկական առողջապահության կենտրոնում:

Ընտրությունների օրը ընտրատեղամասեր կբացվեն նաեւ արտասահմանում: 41 երկրներում գործող 57 ընտրատեղամասեր: ԿԸՀ-ի տվյալներով, ընդհանուր առմամբ, արտասահմանում գրանցված է 49716 ընտրող:

ՊԱՌԱԿՏՈՒՄ՝ ՊԱԱՏԱ ԲՈՒՐՃՈՒԼԱՁԵԻ ԸՆՏՐԱԴԱՇԻՆՔՈՒՄ

«Գիրչի» նոր քաղաքական կենտրոնը թողել է «Պաատա Բուրճուլաձե-պետությունը ժողովրդի համար» ընտրադաշինքը:

Հատկանշական է, որ «Գիրչիի» վերոնշյալ որոշումը հրապարակվեց սեպտեմբերի 28-ին՝ այն օրը, երբ ավարտվեց Վրաստանի խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ցուցակների փոփոխման ժամկետը:

«Նոր աջերի» ղեկավար Մամուկա Կացիտաձեն հայտարարեց, որ իրենք ընտրադաշինքից դուրս գալու մտադրություն չունեն:

Սեպտեմբերի 28-ին «Պաատա Բուրճուլաձե-պետությունը ժողովրդի համար» ընտրադաշինքից հեռացան «Գիրչիի» անդամ 16 մեծամասնական պատգամավորության թեկնածուներ: Այսպիսով, ընտրադաշինքը 16 ընտրատարածքներում թեկնածուներ չի ունենա:

ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿՀԵՌԱՐՁԱԿՎԻ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՎ

Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ուղիղ եթերով կհեռարձակի հոկտեմբերի 8-ի ընտրությունների ձայների հաշվարկման գործընթացը:

Այդ մասին լրագրողներին հայտարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան, նշելով, որ դա արվում է, որպեսզի հասարակայնությունը տեսնի, թե որքանով օբյեկտիվ է իրականացվում ձայների հաշվարկումը:

«Կարեւորագույն նորամուծությունը, որն առաջարկում է ԿԸՀ-ը, կայանում է նրանում, որ ձայների հաշվարկման գործընթացը կհեռարձակվի ուղիղ եթերով: Ցանկացած շահագրգռված անձ կարող է համացանցի օնլայն ռեժիմով ԿԸՀ-ի պաշտոնական կայքով եւ սոցիալական ցանցերով հետեւել ձայների հաշվարկման գործընթացին, օգտագործելով 360 աստիճանի տեխնոլոգիաները»,- հայտարարեց Թամար Ժվանիան:



ՈՒԵՖԱ-Ի ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին, աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց Եվրոպայի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՈՒԵՖԱ) նոր նախագահ Ալեքսանդր Չեֆերինը:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Ալեքսանդր Չեֆերինի հանդիպման սկզբում Գիորգի Կվիրիկաշվիլին, Ալեքսանդր Չեֆերինին շնորհավորեց ՈՒԵՖԱ-ի նախագահ ընտրվելու առթիվ եւ նրան մաղթեց հաջողություններ: Հանդիպմանը կողմերն անդրադարձան մինչեւ 19 տարեկան ֆուտբոլիստների Եվրոպայի առաջնությունը Վրաստանում անցկացնելու ծրագրերին: Կողմերը քննարկեցին նաեւ կառավարության կողմից երկրում ֆուտբոլի զարգացմանն ուղղված միջոցառումների թեման: Նշվեց, որ առաջիկա մեկ տարվա ընթացքում երկրի ֆուտբոլային ենթակառույցներին կավելացվեն տասը խաղադաշտեր:

ԹՊՀ-Ի ՌԵԿՏՈՐ է ԸՆՏՐՎԵԼ ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՁԵՆ

Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ռեկտոր է ընտրվել Վրաստանի կրթության նախկին փոխնախարար Գիորգի Շարվաշիձեն:

Գիորգի Շարվաշիձեի օգտին քվեարկել էր բուհի ակադեմիական խորհրդի 21 անդամ: Նրան մրցակից Գիորգի Բարամիձեն արժանացել է վեց քվեների պաշտպանության, իսկ Ցիրա Բարամիձեն՝ 5-ի: Չորս քվեաթերթիկները ճանաչվել են անվավեր:

Նշենք, որ համալսարանի նախկին ռեկտոր Վլադիմիր Պապավան պաշտոնաթողության ոլորտում էր ընդունել ընթացիկ տարվա մարտին տեղի ունեցած բողոքի գործողություններից հետո:

ՍՐԱՀՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԴԱՌՆՈՒՄ է ՊԱՐՏԱԴԻՐ

Հոկտեմբերի 1-ից էսթետիկայի կենտրոնների եւ գեղեցկության սրահների գրանցումը դառնում է պարտադիր: Փոփոխություններ են կատարվել հասարակական առողջապահության մասին օրենքում, որի նպատակն է վարակների կանխումն ու սանիտարական նորմերի պաշտպանումը: Այդ ամենն իրականացվում է C հեպատիտի էլիմինացիայի ծրագրի շրջանակներում:

Մասնավորապես, հոկտեմբերի 1-ից էսթետիկայի կենտրոններն ու գեղեցկության սրահները պետք է գրանցվեն տնտեսական գործունեության ռեեստրում: Դրա համար նրանք դիմելու են հանրային ռեեստրի ազգային գործակալությանը: Այն դեպքում, եթե սրահը չգրանցվի՝ այն կտուգանվի: Տուգանքը սահմանված է 50-ից մինչեւ 1000 լարի:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՁԵՆՔԻ ԹԱՔՍՏՈՑՆԵՐ

Վրաստանի ՆԳ նախարարության աշխատակիցները երկրի տարածքում հայտնաբերել են թաքստոցներ՝ մեծ քանակությամբ զինամթերքով, պայթուցիկ նյութով եւ հրազենով:

«Տարբեր աշխարհագրական տեղադրություններից առգրավվել են մեծ քանակությամբ հրազեն, զինամթերք, պայթուցիկ սարքեր: Հետաքննությունը պարզել է, որ սույն մարտական նյութերը թաքցվել են 2009-2011 թվականներին»,- ասված է սեպտեմբերի 29-ին ՆԳ նախարարության կայքում հրապարակված հայտարարության մեջ:

Նշվում է, որ առգրավվել են ինքնաձիգեր, ատրճանակներ, ականներ, պայթանյութ՝ տրոտիլ եւ հեքսոգեն, նռնակներ, փամփուշտներ, պայթուցիչներ, արկեր եւ այլ զենք:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ՀԱՎԱՏԱՑԵ'Ք, ՁԱՎԱԽԵԹԻՆ ԿԴԱՌՆԱ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ»

Հոկտեմբերի 8-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում 41 ընտրահամարի տակ հանդես եկող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունից թիվ 46 ընտրատարածքից երկրի խորհրդարանի մեծամասնական պատգամավորության թեկնածու Հենզել Մկոյանը, ինչպես ընդգծում են փորձագետները, ամենահաջող, ամենամարդաշատ նախընտրական քարոզարշավն է անցկացնում Ախալքալաքիի ու Նինոծմինդայի մունիցիպալիտետներում:

Ախալքալաքիի բարձրալեռ գյուղերից մեկի հանդիպումից հետո՝ հանդիպեցինք եւ զրուցեցինք Հենզել Մկոյանի հետ:

- Նինոծմինդայի մունիցիպալիտետում ընտրողների հետ հանդիպումներին առաջադրված պատգամներն ու Ախալքալաքիի շրջանում հանդիպումների ժամանակ հնչեցրած խնդրանքները եւ պահանջները՝ իրարից շա՞տ են տարբերվում:

- Դե, ես Նինոծմինդայից խորհրդարանի արդեն 17 տարվա պատգամավորն եմ: Չորս գումարման պատգամավոր եմ՝ սկսած 1999-2003 թթ.: Եթե այնպես չծառայեի իմ ժողովրդին, ինձ ոչ ոք երկրորդ , էլ չեմ ասում երրորդ ու չորրորդ անգամ չէր ընտրի, բայց այն, որ ես իմ ընտրողների խնդրանքներն ու պահանջները կատարում եմ եթե ոչ հարյուր տոկոսով, ապա այնպես, որ հետեւյալ ընտրություններին ինձ նորից քվե են տալիս, ուրեմն, մեղմ ասած, ժողովուրդը հավատում է իմ հնարավորություններին, նա իր աչքով տեսնում եւ իր մաշկի վրա է զգում այն գործերը, որոնք ես՝ երկրի, շրջանի ու ժողովրդի հետ միասին եմ կատարում:

- Սակայն ախալքալաքցի ընտրողների խնդրանքներն ու պահանջները տարբերվում են Նինոծմինդայից: Ինչո՞ւ:

- Դժվարանում եմ պատասխանել Ձեր այդ հարցին:

- Համեմատությունը դնենք կողքի, պարոն Հենզել, ուղղակի թեթեւ խորհեք այդ հիմնախնդրի շուրջ, չմտահոգելով, չմեղացնելով ոչ ոքի:

- Գիտեք, եթե ընտրված պատգամավորի նկատմամբ կա համոզմունք, կա հավատ, որ եթե պատգամավորը գոնե 40-50 տոկոսով կատարում է խոսքը, ժողովուրդը մեծ առավելությամբ կքվեարկի նրա օգտին, եւ վստահ կլինի, որ չլուծված հիմնախնդիրները մյուս չորս տարում կլուծվեն: Իհարկե, լավ գիտեմ Ախալքալաքիի եւ շրջանի բոլոր հիմնախնդիրները, ընտրողների հետ հանդիպումներից արդեն հասկացա դրա նրբությունները եւ այն ուղիները, որոնցով պետք է օգնենք այդ խնդիրների լուծմանը, որոնք, ցավոք, բազում են շրջանում, եթե համեմատենք Նինոծմինդայի հետ:

- Ունե՞ք երազանքներ, պատգամավորական, իհարկե:

- Գլխավոր երազանքներից մեկը կայանում է նրանում, որ Ձավախեթի ներքաշենք խոշոր ներդրումներ, ոչ միայն միջազգային ներդրողներին՝ աշխարհի խոշոր երկրներից, այլեւ ակումուլացնենք ծնունդով ջավախքցի աշխարհով մեկ սփռված ներդրողներին եւ այդ ներդրումներով զարգացնենք խոշոր գյուղատնտեսական վերամշակման ինդուստրիան: Մեծ ապագա ունի իներտ նյութերի արտադրությունը, որով շատ հարուստ է մեր երկրամասը: Կանեմ ամեն ինչ, որպեսզի սկսվի աշխատանքը այդ երկու նախագծերի ուղղությամբ, եթե դա սկսի իրականանալ, նշանակում է, որ Ախալքալաքիի ու Նինոծմինդայի շրջաններում կստեղծվեն, ինչպես հաշվարկում են փորձագետները, 15-25 հազար նոր աշխատատեղեր, այդ կառույցների գործարկման դեպքում, բնական է, կկառուցվեն նոր ճանապարհներ, դպրոցներ, հիվանդանոցներ... Ժողովուրդը չի բռնի արտագաղթի ճանապարհը:

- Ե՛վ Ախալքալաքիում, ե՛ւ Նինոծմինդայում բոլորը պնդում են, որ այս ընտրարշավի հաղթողը Մկոյանն է լինելու:

- Ասում են...

- Ձե՞ք հոգնել պատգամավորի պարտականություն կատարելուց:

- Երբ սկսում եմ մտածել մարդկանց ինչ-որ բանով օգնելու մասին, հոգնածության զգացում չեմ ունենում: Հոգնածությունը շատ ուժեղ սկսում է ճնշել քո ուսերը: Սակայն, երբ հիմնախնդիրը լուծված է, տեսնում ես մարդկանց ուրախ դեմքերը, եւ նրանցից լսում «Շնորհակալություն, Հենզել ջան» բառերը, մի վայրկյանում հոգնածությունը անցնում է, դառնում ես կարծես 20 տարեկան...

- Ջավախքցիներից ինչ-որ մեկը ասել է, որ Հենզել Մկոյանը մի երազանք էլ ունի, գերազանցել ամերիկացի հայտնի քաղաքական գործիչ Էդվարդ Քենեդիի (ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջոն Քենեդիի կրտսեր եղբոր) ռեկորդը, որը յոթ գումարման սենատոր էր:

- Նախ՝ Վրաստանում սենատ չկա, այդ պատճառով նրա ռեկորդը չեմ կարող գերազանցել: Այ, եթե լիներ կոնգրեսմեն՝ մեր խորհրդարանականի նմանակը, կփորձեի բարելավել... Բայց եթե հինգերորդ անգամ դառնամ պատգամավոր, կարծում եմ, որ նորանկախ Վրաստանի խորհրդարանական պատմության մեջ կարող է եւ դառնամ յուրահատուկ ռեկորդակիր:

- Հարց, որ Ձեզ եւ Ձեր խմբակցության անդամներին միշտ տալիս են. Ազգայինների հետ էիք, հիմա արժանացել եք «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» իշխող կուսակցության համակրանքին: Բայց Ձեզ հիշում եմ որպես ընդդիմադիր Շեւարդնաձեի կառավարման օրոք, երբ Նինոծմինդայի ընտրատարածքից համոզիչ հաղթանակ տարաք այն ժամանակ իշխող կուսակցության՝ «Քաղաքացիների միություն» ներկայացուցչի նկատմամբ:

- Լավ է, որ հիշում եք այդ փաստը: Ես համեստությունից ելնելով, հատկապես այդ դրվագը երբեք չեմ հիշատակում: Առաջին տարին շատ դժվար էր, բոլոր իմ ջանքերը՝ ուղղված իմ ընտրողների կողմից առաջադրված որեւէ հարցի լուծմանը, որտեղ հարկավոր էր պետության աջակցությունը, «չտեսնելու ու չլսելու» սկզբունքով անտեսվում էր, եւ հասկացա, որ առանց պետության հետ համագործակցելու, նրա հետ սերտ կապ ստեղծելու, դժվար է կատարել պատգամավորի գործառույթը: Միեւնույն ժամանակ, իշխանությանը հարկավոր է բարյացակամ քննադատել, ասել, որ «լավ կլիներ, որ հիմնախնդրային այս կամ այն հարցը, որը, երեւի, բացթողման է ենթարկված, առաջադրվի եւ կարգավորվի», սկսել այդ հարցի առաջ քաշումը եւ դրա լուծումը: Այսպես սկսվեց իմ համագործակցությունը պետության հետ:

- Հաճախ են քննադատում Վրաստանի խորհրդարանի ջավախքցի պատգամավորներին, որ չեն տիրապետում վրացերենին, եւ ելույթ չեն ունենում խորհրդարանում:

- Իհարկե, լավ կլիներ, որ վրացերենին տիրապետենք գոնե ռուսերենի պես, ավելի լավ՝ եթե տիրապետենք ինչպես հայերենին, սակայն հավատացնում եմ, մոտ ժամանակներում Ձավախեթիից ընտրված պատգամավորները հիանալիորեն կտիրապետեն պետական լեզվին:

Ինչ վերաբերում է ելույթներին, ուզում եմ պարզաբանել՝ կառավարության հրավիրված անդամների ներկայությամբ խորհրդարանում կա օրենքների քննարկման երկու տարբերակ. առաջինը՝ կոմիտեական լսումները, երբ բոլոր հարցերը, փաստորեն, լուծվում են այդ նիստերին, եւ կոմիտեն հարցը դուրս է բերում խորհրդարանի լիագումար նիստին, եւ այդտեղ ընդունվում է վերջնական որոշումը: Իմ կողմից բարձրացրած այդ հարցերը կոմիտեական լսումների ժամանակ հաշվի են առնվել եւ ընդունվել, եթե չընդունվեր, հավատացնում եմ ձեզ, լիագումար նիստին ելույթ կունենայի ռուսերեն եւ կհասկացնեի հիմնախնդրի էությունը: Ես կողմ եմ, որ պատգամավորը ունենա հնարավորություն՝ շրջանի հիմնախնդիրները լուծելու համար դիմել բոլորին, վարչապետից սկսած ու նախարարներով վերջացրած: Ես այդպիսի մոտեցում ունեմ: Երբ ուզում ես լուծել ու իրականացնել քո պատգամավորական պարտականությունը, ապա այդ մոտեցումը ավելի արդյունավետ եմ համարում, քան ելույթները, լինի դա խորհրդարանում, հանրապետական, երկրամասային կամ մունիցիպալային խորհրդակցություններում:

- Շնորհակալություն հարցազրույցի համար:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԿԱՆԻՇ

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն՝ Վրաստանն իր մրցունակությամբ 59-րդն է աշխարհի 138 երկրների միջեւ, իսկ Հայաստանը՝ 79-րդը:

Համաշխարհային մրցունակության զեկույցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով:

Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից եւ հաշվարկվում է մրցունակության 12 հենասյուների հիման վրա: Ցուցիչի հաշվարկման հիմքում ընկած են վիճակագրական տվյալներ եւ ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները:

2016/17 զեկույցի արդյունքներով՝ առաջատար երեք երկրները շարունակում են մնալ Շվեյցարիան, Սինգապուրը եւ ԱՄՆ-ը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաեւ Նիդերլանդները եւ Գերմանիան: ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ՝ Վրաստանը) երկրների խմբում առաջընթաց են արձանագրել Վրաստանը (7 կետով), Ադրբեջանը (3 կետով), Տաջիկստանը (3 կետով) եւ Ռուսաստանը (2 կետով): Հայաստանը գրանցել է առաջընթաց 3 կետով: Զգալի հետընթաց են արձանագրել Մոլդովան (16 կետով) եւ Ղազախստանը (11 կետով):

2016-2017թթ. մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Վրաստանը 138 երկրների մեջ գրավում է 59-րդ տեղը, իսկ Հայաստանը՝ 79-րդը՝ նախորդ տարվա համեմատ դիրքը բարելավելով համապատասխանաբար 7 եւ 3 տեղով: Զգալի առաջընթաց են գրանցել նորարարություն, գործարարության կատարելագործվածություն եւ ինստիտուտներ հենասյուները: Որոշ դրական փոփոխություններ են գրանցել նաեւ՝ ապրանքների շուկայի արդյունավետություն, ֆինանսական շուկայի զարգացվածություն, տեխնոլոգիական պատրաստվածություն եւ աշխատուժի շուկայի արդյունավետություն հենասյուների ցուցանիշները: Միեւնույն ժամանակ վատթարացել են մակրոտնտեսական միջավայր եւ շուկայի չափ հենասյուների ցուցանիշները: Մակրոտնտեսական միջավայրի վրա բացասաբար են ազդել գնաճի եւ պետական բյուջեի պակասուրդի բարձր մակարդակները:

Բիզնես սկսելու հետ կապված գործընթացների քանակը եւ ժամկետները հաստատուն կերպով մնում են Վրաստանի եւ Հայաստանի ուշագրավ առավելությունների շարքում: Վրաստանի եւ Հայաստանի ուշագրավ առավելություններին են դասվում նաեւ հարկման ցածր բեռը եւ աշխատանքի ընդունման/հեռացման ճկունությունը: Մրցակցային թերություններն այնպիսի կարեւոր ոլորտներում են, ինչպիսիք են ֆինանսավորումը տեղական կապիտալի շուկայի միջոցով, նավահանգստային ենթակառուցվածքի որակը (այն երկրները, որոնք չունեն ելք դեպի բաց ծով, գնահատում են ամենամոտ նավահանգիստը), արտաքին շուկայի չափի համաթիվը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ